ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 174-Ա
27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021Թ
ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետով և հիմք ընդունելով «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N317 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի հոկտեմբերի 28-ից «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Հովհաննիսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 28-ի N317 աշխատանքային պայմանագիրը:
2. 2021 թվականի հոկտեմբերի 28-ից «Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել փոխտնօրեն Տարոն Մկրտչյանի վրա :

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:
4. Հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

10/27/2021

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ հոկտեմբերի 27-ի
N174-Ա որոշման

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԳԼԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Գաբրիելյան Ավագ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Անդամներ՝ Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ